

ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆ

2005 թ. հուլիսի 6-ին վախճանվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ Գևորգ Բեզլարի Ջահուկյանը:

Հայ լեզվաբանական միտքը ծանր կորուստ կրեց:

Կյանքից հեռացավ միջազգային ճանաչում ունեցող հայ գիտնականը, աշխարհի լեզուների ուսումնասիրության մեջ հայերենի վերաբերյալ ամենավատահեղի և իրական փաստեր տրամադրող լեզվաբանը, հայերենագիտության բնագավառի մեծ կազմակերպիչը, հայերենի պատմության և կառուցվածքի, հայերենի և մյուս լեզուների առնչությունների անխոնջ ուսումնասիրողը:

Գ. Ջահուկյանը ծնվել է 1920 թ. ապրիլի 1-ին ՀՀ Կալինինոյի շրջանի Շահնագար (ներկայումս՝ Տաշիրի շրջանի Մեծավան) գյուղում: Այսօր Ստեփանավան քաղաքի փողոցներից մեկը կոչվում է նրա անունով: Նա ավելի քան 40 տարի տնօրինել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական ղեկավարությունը, գրել է մի քանի տասնյակից ավելի գրքեր և մի քանի հարյուրից անցնող գիտական հոդվածներ: Նրա աշխատությունները վերաբերում են հայոց լեզվին՝ վերջինիս խորությամբ ու լայնությամբ, հայերենի և մյուս ինչ ու նոր լեզուների տարբեր կարգի առնչություններին, որոնք տպագրվել են մի քանի լեզուներով:

Մեծ է Գ. Ջահուկյանի ներդրումը հայոց լեզվի համեմատական ուսումնասիրության ոլորտում: Նա մշակել է լեզուների ուսումնասիրության համընդհանուր կադապար, որը հնարավորություն է տալիս ամբողջական ձևով ներկայացնելու լեզվի տարբեր պլանները և վերջիններիս փոխադարձ առնչությունները:

Գ. Ջահուկյանը եղավ 1950-ական թթ. սկսած հայերենագիտության բնագավառում կատարվող գիտական և գիտամեթոդական աշխատանքի կենտրոնական ղեմը, մեծ կազմակերպիչն ու խորհրդատուն: Արդի հայերենագիտության մեջ այսօր չկա որևէ բնագավառ, որտեղ իր հիմնարար և ուղեւեջող խոսքն ասած չլինի անվանի գիտնականը:

Տարիներ շարունակ նրա ղեկավարած գիտական խորհրդում իրենց գիտական մկրտությունն են ստացել մեր հանրապետության գիտական կյանքին լծված բազմաթիվ երիտասարդ և միջին սերնդի լեզվաբաններ: Հայ լեզվաբանական ներկայիս միտքը՝ իրև հայերենին վերաբերող ինքնուրույն դպրոց, իր բոլոր կողմերով պարտական է Գ. Ջահուկյանի գիտական խորաթափանց մտքին և իմաստուն կազմակերպմանը:

Գ. Ջահուկյանի կարևորագույն աշխատությունները եղել են և մնալու են յուրաքանչյուր նվիրյալ հայերենագետի սեղանի գիրքը:

Մեծ լեզվաբանի, գիտության անխոնջ մշակի և կազմակերպի անունը, գիտական վաստակը հար և միշտ մնալու են հայ գիտության, մտավոր մշակույթի մեջ: